ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀԱՄԱԶԱՍՊ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, տնտեսագիտության թեկնածու

ԳԱԳԻԿ ԲԱԴԱԴՅԱՆ
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի մագիստրանտ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները բազմաթիվ են, իսկ անհամաչափության օրեցօր աճող ծավալները հրամայական ու հրատապ են դարձնում հիմնախնդրի լուծումը: Խնդրո առարկայի վերաբերյալ առկա հետազոտությունները առավելապես շեշտադրում են անալիտիկ տվյալների վերլուծությունը, իսկ սինթետիկ տվյալների դիտարկմամբ և համակարգային մոտեցմամբ հետազոտությունները սակավադեպ են: Այս բացը լրացնելու համար, վիճակագրական փաթեթի կիրառմամբ, հետազոտությունում կատարվել է կլաստերային և գործոնային վերլուծություն: Արդյունքում, ՀՀ մարզերը և մայրաքաղաք Երևանը դասակարգվել են ըստ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի, ինչպես նաև յուրաքանչյուրին տրվել է մեկ ամփոփ գործոնային գնահատական, որը նկարագրում է տարածքային միավորի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը (ստացված ցուցանիշները կիրառելի են միայն համեմատական նպատակներով): Քանակական վերլուծությամբ ստացված ցուցանիշները ամփոփելուց հետո փորձ է արվել, համակարգային մոտեցման պահպանմամբ, ներկայացնել որոշակի առաջարկություններ, որոնք կարող են նպաստել ՀՀ տարածքային քաղաքականության զարգացմանը:

Հիմնաբառեր. *տարածքային զարգացում, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, գործոնային վերլուծություն, կլաստերային վերլուծություն, տարածքային քաղաքականություն*

JEL: O10, R11, R58

Ներածություն: Ցանկացած երկրում տարածքային առանձին միավորների զարգացման սոցիալական և տնտեսական անհամաչափությունները ուղղակիորեն կամ անուղղակիորեն բացասաբար են ազդում ընդհանուր տնտեսական աճի և զարգացման մակարդակի վրա: Ուստի, ցանկացած երկրի կառավարության առաջնային նպատակն է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կհանգեցնեն տարածքային միավորների միջև առկա սոցիալ-տնտեսական զարգացման անհամապատասխանություններով պայմանավորված հիմնախնդիրների լուծմանը: Այս տեսանկյունից, Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ, ավելին՝ մայրաքաղաք Երևանի և մարզերի միջև առկա զարգացման ահռելի և ակներև, միևնույն ժամանակ՝ անընդհատ աճող անհամաչափությունները հիմք են տալիս պնդելու, որ ՀՀ-ում հիմնախնդրի լուծումը ստացել է առավելագույն հրատապություն և կարևորություն:

Հետևաբար, ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման ուսումնասիրությունը, հիմնախնդիրների առաջադրումը և դրանց լուծման տարբերակների ներկայացումը արդիական են և կարևոր ՀՀ տարածքային քաղաքականության զարգացման տեսանկյունից:

Գրականության ակնարկ: Տնտեսագիտական մտքի զարգացման ողջ ընթացքում տարածքային զարգացման հիմնախնդիրները քննարկվել են բազմաթիվ հետազոտողների կողմից, սակայն այդ հիմնախնդիրները տարածքային զարգացման քաղաքականության և դրա պլանավորման համատեքստում առաջին անգամ հետազոտել են *Ջոն Ֆրիդմանը և Վիլյամ Ալոնսոն*, որոնց «Տարածքային զարգացում և պլանավորում» (1964 թ.) հետազոտությունը ձևավորել է տարածքային զարգացման կարգավորման անհրաժեշտության առաջին պատկերացումները և ուղենիշները[1]:

Նախորդ հիսուն տարիների ընթացքում իրականացվել են ոլորտի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ: Արդյունքում, խնդրո առարկան բավականաչափ ուսումնասիրված է ինչպես համաշխարհային, այնպես էլ հայրենական տնտեսագիտական գրականությունում: Տարածքային զարգացման տարբեր ասպեկտներ քննարկել են արտասահմանցի գիտնականներ *Դ.Ե. Ամելինը, Վ.Ա. Գնևկոն, Վ.Ե. Ռոխչինը, Ա.Գ. Գրանբերգը, Ա.Օ. Հիրսչմենը, Հ. Արմսթրոնգը, Ջ. Թեյլորը, Հ. Վինկլերը* և այլք, ինչպես նաև հայրենական հետազոտողներ *Յու.Մ. Սուվարյանը, Հ.Բ. Ղուշչյանը, Է.Ֆ. Ղազարյանը, Ռ.Ա. Հայրապետյանը, Ա. Քթոյանը, Ծ. Կարապետյանը* և այլք:

Այնուամենայնիվ, խոսելով երկրի տարածքային անհամաչափ զարգացման մասին, առաջին հերթին, անհրաժեշտություն է առաջանում դիտարկելու, թե ինչ է ընդհանրապես համաչափ զարգացումը: Ընդունված է համարել, որ երկիրը համաչափ տարածքային զարգացում է գրանցում, երբ դրա առանձին տարածքային միավորներն ունենում են ներդաշնակ և համադրելի տնտեսական ու սոցիալական աճ[2]: Հետևաբար, այս պայմանի ցանկացած

---

[1] Տե՛ս **Bergman E.M., Feser E.,** Regional Economic Development Planning, The Routledge Handbook of International Planning Education, Chapter 17, 2019, էջ 190-200:

[2] Տե՛ս **Ray D.,** Uneven Growth: A Framework for Research in Development Economics, Pittsburgh, USA, "Journal of Economic Perspectives", Vol. 24, Number 3, Summer 2010, էջ 45-60:

խախտում կարող ենք համարել պետության տարածքային անհամաչափ զարգացման հայտանիշ:

Պետության տարածքային անհամաչափ զարգացումը բնութագրելու համար կարող ենք օգտագործել համաշխարհային տնտեսության անհամաչափ զարգացման բնորոշումը՝ հիմք ընդունելով համանմանության (անալոգիայի) մեթոդը: Ինչպես համաշխարհային տնտեսության դեպքում, այնպես էլ առանձին պետության մակարդակով, որոշ տարածքային միավորներ (համաշխարհային տնտեսության պայմաններում՝ որոշ պետություններ/տնտեսություններ) որոշակի գործոնների ազդեցությամբ ձեռք են բերում աճի կենտրոնացման և ներդրումների տեսանկյունից առավելություն: Նմանօրինակ գործոններ են աշխարհագրական տեղադիրքը, ռեսուրսային ներուժը, աշխատանքի շուկան և դրա առաջարկը, կապիտալ միջոցների առկայությունը և այլն: Որոշակի տարածքային միավորներում աճի կենտրոնացումը վերոնշյալ գործոնների ազդեցությամբ հանգեցնում է մյուս տարածքներից ներդրումների, աշխատուժի և ռեսուրսների ներհոսքի, ինչն էլ ավելի է խորացնում տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակների ճեղքվածքն առանձին տարածաշրջանների միջև[3]:

Խնդիրն այն է, որ տարածքային անհամաչափ զարգացումը շատ հաճախ դրսևորվում է կուտակային էֆեկտով, մասնավորապես՝ նախկին անհամաչափությունը հանգեցնում է հենց այդ նույն անհամաչափության մեծացմանը: Իսկ սա նշանակում է, որ մարդիկ թերզարգացած տարածքներից ձգտում են տեղափոխվել ավելի զարգացած տարածքներ կամ շրջաններ, ինչը մի կողմից հանգեցնում է երկրի խոշոր քաղաքներում բնակչության գերկենտրոնացմանը, իսկ մյուս կողմից՝ հիմնականում գյուղական կամ խոշոր քաղաքային կենտրոններից հեռու գտնվող բնակավայրերի աստիճանական դատարկմանը: Այս խնդիրը կարևորում են գրեթե բոլոր երկրների կառավարությունները՝ դրա հաղթահարման ուղղությամբ մշակելով և իրագործելով տարածքային համաչափ զարգացման համապատասխան քաղաքականություններ[4]:

Պետության առանձին տարածքային միավորների զարգացման մակարդակների միջև անհամաչափությունը գնահատելու համար անհրաժեշտություն է առաջանում դիտարկելու տնտեսական և սոցիալական զարգացումը բնութագրող մի շարք ցուցանիշներ: Այդ դիտարկումները հիմք ընդունելով է հնարավոր գնահատել տարածքային զարգացման բնույթը: Ըստ այդմ, առանձնացնում են տարածքային զարգացման երեք հնարավոր վիճակ՝ *ասիմետրիկ, սիմետրիկ և չեզոք*: Ասիմետրիկ տարածքային զարգացումը մի վիճակ է, երբ առանձին տարածքային միավորների սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշները փոփոխվում են անհամաչափորեն, մասնավորապես՝ զարգացած տարածաշրջաններում ցուցանիշները գրանցում են առավել մեծ դրական տեղաշարժեր, ի տարբերություն առավել թույլ զարգացած տարածաշրջանների, որոնցում կարող են ոչ միայն չլինել դրական տե-

---

[3] Տե՛ս **Kyrylych K.,** Problem of Uneven Economic Development of the World Economy: Essence and Causes, Lviv, Ukraine, "Intellectual Economics" Research journal, Vol. 7, No 3, 2013, էջ 344-354:

[4] Տե՛ս **Ա. Քթոյան,** Տարածքային անհամաչափ զարգացման քանակական «դեմքը», Եր., «Ամբերդ» տեղեկագիր, 2019/1, ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, 2019, էջ 25-28:

ղաշարժեր, այլև լինել բացասական: Ասիմետրիկ տարածքային զարգացման հետևանքով ավելի ու ավելի է խորանում տարածքային զարգացման անհամաչափությունը՝ պայմանավորված առկա ճեղքվածքի մեծացմամբ:

Սիմետրիկ զարգացմանը, ի տարբերություն ասիմետրիկ զարգացման, բնորոշ է այն վիճակը, երբ ցուցանիշների փոփոխության միջև առկա անհամաչափությունն ամեն հաջորդ ժամանակաշրջանում կրճատվում է: Իսկ չեզոք տարածքային զարգացման դեպքում ամեն հաջորդ ժամանակաշրջանում պահպանվում է նախորդ ժամանակաշրջանի անհամաչափության աստիճանը[5]: Վերոնշյալ տարանջատումը հիմք ընդունելով՝ կարող ենք պնդել, որ ՀՀ տարածքային զարգացումն ասիմետրիկ է: Եվ այս հետազոտության շրջանակում փորձ է արվելու գնահատել այդ անհամաչափության աստիճանը, ինչպես նաև ներկայացվելու են որոշակի եզրահանգումներ, որոնք կարող են որպես արժեքավոր մոտեցումներ ծառայել ՀՀ տարածքային զարգացմանը սիմետրիկ բնույթ հաղորդելու գործընթացում:

Հետազոտության մեթոդաբանություն: Հայաստանի Հանրապետության տարածքային անհամաչափ զարգացման սոցիալ-տնտեսական բնութագրիչները գնահատելու համար հետազոտությունում օգտագործվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, համեմատական, դինամիկ, գործոնային և կլաստերային վերլուծության մեթոդները: Հետազոտությունը հիմնականում իրականացվել է SPSS վիճակագրական փաթեթի կիրառմամբ, վերջինիս միջոցով էլ՝ կլաստերային և գործոնային վերլուծություն: Նմանօրինակ վերլուծությունների համար հիմք են ընդունվել ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած ավելի քան 20 ցուցանիշներ, որոնք բնութագրում են մայրաքաղաք Երևանի և 10 մարզերի տնտեսական ու սոցիալական զարգացման մակարդակները: Կիրառված մեթոդների միջոցով հնարավոր է եղել գնահատել ՀՀ տարածքային զարգացման սոցիալ-տնտեսական անհամաչափությունը, որի հիման վրա էլ ձևակերպվել են եզրահանգումներ և ներկայացվել առաջարկություններ:

Գնահատելու համար օգտագործվել են հետևյալ ցուցանիշները՝ բնակչության թվաքանակ, ծնվածների և մահացածների թվաքանակ, բնական աճ, քաղաքային և գյուղական բնակչություն, զբաղվածներ և գործազուրկներ, աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակ, համախառն ներքին արդյունք մարզերի և Երևանի համար, արդյունաբերական համախառն, այդ թվում՝ հանքագործական և մշակող արդյունաբերական արտադրանք, գյուղատնտեսական համախառն, այդ թվում՝ բուսաբուծության և անասնաբուծության ծավալներ, շինարարության ու ծառայությունների ծավալ, մանրածախ առևտրի շրջանառություն, ինչպես նաև միջին ամսական անվանական աշխատավարձ: Վերոնշյալ ցուցանիշները դիտարկվել են ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական տեսքով:

Այս ցուցանիշների ընտրությունը պայմանավորված է տարածքային միավորների սոցիալական և տնտեսական զարգացման մակարդակի հետ դրանց ուղղակի առնչությամբ: Մեթոդների ընտրությունը հիմնավորվում է սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող առավելագույն թվով ցուցա-

[5] Տե՛ս **Коваленко Е.Г.,** Региональная экономика и управление, Санкт-Петербург, 2005, էջ 64-67:

նիշների միջոցով հնարավորինս օբյեկտիվ և համակարգային վերլուծության անհրաժեշտությամբ:

Վերլուծություն: ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունը գնահատելիս, առաջին հերթին, անհրաժեշտություն է առաջանում գնահատելու, թե ՀՀ մարզերը և մայրաքաղաք Երևանը սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակում ինչ հեռավորության վրա են գտնվում: Նշված խնդրի լուծման համար հետազոտության այս հատվածում իրականացրել ենք կլաստերային վերլուծություն, որի գլխավոր նպատակն է ՀՀ մարզերը և Երևանը խմբավորել ըստ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի:

Արդյունքների օբյեկտիվության համար անհրաժեշտ ենք համարել ներկայացված ցուցանիշներն օգտագործել հարաբերական դիտարկմամբ: Մասնավորապես, դիտարկվող ցուցանիշները կշռել ենք՝ ըստ տարածաշրջանների բնակչության թվաքանակի: Արդյունքում, վիճակագրական փաթեթի կիրառմամբ, ստացել ենք կլաստերացման աստիճանակարգության պատկերը՝ դենդրոգրամը, որը ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. ***ՀՀ մարզերի և մայրաքաղաք Երևանի կլաստերացման դենդրոգրամը***[6]

Գծապատկեր 1-ի արդյունքներից տեսանելի է, որ նպատակահարմար է ՀՀ մարզերը և Երևանը խմբավորել 4 հիմնական կլաստերներում: Մարզերի և Երևանի պատկանելությունն այս կամ այն կլաստերին, ինչպես նաև դրանց

[6] Կլաստերացումն իրականացրել են հեղինակները՝ SPSS վիճակագրական փաթեթի կիրառմամբ: Տվյալների աղբյուր՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019», ՀՀ ՎԿ, 2019:

հեռավորությունը կլաստերների կենտրոնից, ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ մարզերի և մայրաքաղաք Երևանի պատկանելությունը կլաստերներին

Մարզը	Կլաստերի համարը	Կլաստերի հեռավորությունը կենտրոնից
Երևան	1	0
Արագածոտն	4	393.007
Արարատ	2	463.416
Արմավիր	4	356.122
Գեղարքունիք	4	233.528
Լոռի	4	264.793
Կոտայք	2	360.272
Շիրակ	4	191.318
Սյունիք	3	0
Վայոց ձոր	2	473.346
Տավուշ	4	322.680

Ինչպես տեսնում ենք, Երևանն առանձին ձևավորել է 1-ին կլաստերը և բացարձակ ցուցանիշներով ՀՀ բոլոր մարզերին անառարկելիորեն գերազանցում է իր տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակով: Այնուամենայնիվ, հարաբերական ցուցանիշների տեսանկյունից (երբ դրանք վերահաշվարկվում են մեկ շնչի համար) Սյունիքի մարզը բավականաչափ մոտենում է Երևանին, ավելին՝ որոշ ցուցանիշներով նույնիսկ գերազանցում (հատկապես՝ արդյունաբերական արտադրանքի ցուցանիշների տեսանկյունից): Ըստ այդմ, Սյունիքի մարզն էլ, իր հերթին, ձևավորում է վերլուծության 3-րդ կլաստերը:

ՀՀ մյուս մարզերը կլաստերացման տեսանկյունից բավականաչափ մոտ են, սակայն, առկա տարբերություններով պայմանավորված, Վայոց ձորի, Կոտայքի, Արարատի մարզերը ձևավորում են դիտարկման 2-րդ կլաստերը, իսկ Տավուշի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերը՝ 4-րդ կլաստերը: Այս երկու կլաստերները ներկայացնող մարզերի սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշների դիտարկմամբ պարզ է դառնում, որ 2-րդ կլաստերը, 4-րդ կլաստերի հետ համեմատական դիտարկման պարագայում, պայմանականորեն կարող ենք համարել սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող մարզերի խմբավորում:

Այնուամենայնիվ, կլաստերացման արդյունքների դիտարկման ընթացքում նպատակահարմար է ներկայացնել կլաստերացման գործընթացում մասնակցած ցուցանիշների նշանակալիությունը: Վերլուծության ընթացքում նշանակալիության սահման ենք ընդունել 10% շեմը: Համապատասխան ցուցանիշները, ինչպես նաև այդ շեմի հաղթահարման արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Ներկայացված աղյուսակից տեսանելի է, որ դիտարկված 20 ցուցանիշներից 6-ն ունեն բացարձակ նշանակալիություն: Ավելին, կլաստերացման գործընթացում բացարձակ նշանակալիություն ունեն հատկապես այն ցուցանիշները, որոնք տնտեսագիտական իմաստով առավել բնութագրական են սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունները գնահատելու

համար: Ընդհանուր առմամբ, դիտարկված 20 ցուցանիշներից նշանակալի են եղել 11-ը, իսկ ահա ոչ նշանակալի ցուցանիշներով ՀՀ մարզերը և Երևանը առանձնապես չեն տարբերվում: Հետևաբար, մեր իրականացրած կլաստերային վերլուծության արդյունքները կարող ենք համարել արժանահավատ, սակայն առավել համապարփակ վերլուծության համար նպատակահարմար է նաև վերոնշյալ ցուցանիշների միջոցով գործոնային վերլուծությունը[7]:

Աղյուսակ 2

Կլաստերացման մեջ ներառված ցուցանիշների նշանակալիությունը

Ցուցանիշը	*Նշանակալիությունը*
Ծնվածներ/բնակչության թվաքանակ	**0.071**
Մահացածներ/բնակչության թվաքանակ	0.621
Բնական աճ/բնակչության թվաքանակ	0.258
Քաղաքային բնակ./բնակչության թվաքանակ	**0.033**
Գյուղական բնակչություն/բնակչության թվաքանակ	**0.033**
Զբաղվածներ/բնակչության թվաքանակ	0.601
Գործազուրկներ/բնակչության թվաքանակ	0.681
Աղքատներ/բնակչության թվաքանակ	0.733
Ծայրահեղ աղքատներ/բնակչության թվաքանակ	0.734
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	**0.000**
Արդյունաբերություն՝ 1 շնչի հաշվով	**0.000**
Հանքագործական արդյունաբերություն՝ 1 շնչի հաշվով	**0.000**
Մշակող արդյունաբերություն՝ 1 շնչի հաշվով	**0.054**
Գյուղատնտեսություն՝ 1 շնչի հաշվով	0.114
Բուսաբուծություն՝ 1 շնչի հաշվով	0.582
Անասնաբուծություն՝ 1 շնչի հաշվով	**0.087**
Շինարարություն՝ 1 շնչի հաշվով	0.346
Մանրածախ առևտրի շրջանառություն՝ 1 շնչի հաշվով	**0.000**
Ծառայությունների ծավալ՝ 1 շնչի հաշվով	**0.000**
Միջին ամսական անվանական աշխատավարձ	**0.000**

Նարնջագույնով այն ցուցանիշներն են, որոնք բավարարում են 10% նշանակալիության մակարդակում նշանակալի լինելու հիպոթեզը:

Մինչ անցում կկատարենք առանձնացված գործոնների դիտարկմանը, անհրաժեշտ է, նախևառաջ, ներկայացնել, թե վերլուծությամբ ստացված մոդելը դիտարկվող գործոններից յուրաքանչյուրի վարիացիայի քանի տոկոսն է բացատրում: Այդ արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Մոդելում օգտագործված բոլոր ցուցանիշների վարիացիայի բացատրության տոկոսները բավարար են՝ մոդելում այդ ցուցանիշները նշանակալի համարելու համար: Դիտարկված 20 ցուցանիշից 10-ի դեպքում մոդելով բացատրվում է դրանց վարիացիայի ավելի քան 90%-ը, 6-ի դեպքում՝ ավելի քան 80%-ը, 2-ի դեպքում՝ ավելի քան 70%-ը, մյուս 2-ի դեպքում՝ ավելի քան 60%-ը: Այժմ անհրաժեշտ է նաև դիտարկել առանձնացված գործոնները և

[7] Գործոնային վերլուծությունն իրականացրել են հեղինակները՝ SPSS վիճակագրական փաթեթի կիրառմամբ: Տվյալների աղբյուր՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019», ՀՀ ՎԿ, 2019:

դրանց կողմից մոդելի բոլոր ցուցանիշներով պայմանավորված վարիացիայի բացատրվող մասը:

Աղյուսակ 3

Մոդելի միջոցով ցուցանիշների վարիացիայի բացատրվող մասը

Ցուցանիշը	Վարիացիայի բացատրվող մասը
Ծնվածներ/բնակչության թվաքանակ	0.898
Մահացածներ/բնակչության թվաքանակ	0.698
Բնական աճ/բնակչության թվաքանակ	0.855
Քաղաքային բնակ./բնակչության թվաքանակ	0.964
Գյուղական բնակ./բնակչության թվաքանակ	0.964
Զբաղվածներ/բնակչության թվաքանակ	0.827
Գործազուրկներ/բնակչության թվաքանակ	0.777
Աղքատներ/բնակչության թվաքանակ	0.872
Ծայրահեղ աղքատներ/բնակչության թվաքանակ	0.922
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	0.951
Արդյունաբերություն՝ 1 շնչի հաշվով	0.916
Հանքագործական արդյունաբեր.՝ 1 շնչի հաշվով	0.985
Մշակող արդյունաբերություն՝ 1 շնչի հաշվով	0.622
Գյուղատնտեսություն՝ 1 շնչի հաշվով	0.937
Բուսաբուծություն՝ 1 շնչի հաշվով	0.812
Անասնաբուծություն՝ 1 շնչի հաշվով	0.752
Շինարարություն՝ 1 շնչի հաշվով	0.832
Մանրածախ առևտրի շրջանառ.՝ 1 շնչի հաշվով	0.914
Ծառայությունների ծավալ՝ 1 շնչի հաշվով	0.964
Միջին ամսական անվանական աշխատավարձ	0.981

Ընդհանուր առմամբ, վիճակագրական փաթեթի կիրառմամբ 1 սեփական արժեք ունենալու սահմանագծի պայմաններում առանձնացվել է 4 հիմնական գործոն: Այդ գործոնները միասին բացահայտում են 20 ցուցանիշով պայմանավորված վարիացիայի 86.717%-ը, կամ այլ մեկնաբանությամբ՝ ստացված գործոնները բացահայտում են սկզբնական տեղեկատվության 86.717%-ը: Համապատասխան գործոնների սեփական արժեքները, դրանց կողմից բացատրվող վարիացիայի տոկոսները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Մոդելի միջոցով ստացված գործոնները

Գործոնը	Սեփական արժեքը	Բացատրվող վարիացիան	Կուտակային
I	7.298	36.491%	36.491%
II	5.034	25.172%	61.664%
III	3.362	16.812%	78.475%
IV	1.648	8.242%	86.717%

Ձևավորված 4 հիմնական գործոնները որոշակի կախվածություն ունեն դիտարկվող 20 ցուցանիշներից, կամ այլ կերպ ասած՝ դիտարկվող ցուցանիշներից յուրաքանչյուրն ունի իր գործոնային բեռնվածությունը: Այդ տեղեկատվությունն ամփոփված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Ցուցանիշների գործոնային բեռնվածությունը

Ցուցանիշը	Գործոնային բեռնվածությունը			
	I	II	III	IV
Ծնվածներ/բնակչության թվաքանակ	+0.200	**+0.883**	-0.201	-0.196
Մահացածներ/բնակչության թվաքանակ	+0.212	**-0.607**	-0.206	-0.492
Բնական աճ/բնակչության թվաքանակ	-0.050	**+0.887**	+0.045	+0.253
Քաղաքային բնակ./բնակչության թվաքանակ	**+0.886**	+0.148	+0.385	-0.094
Գյուղական բնակ./բնակչության թվաքանակ	**-0.886**	-0.148	-0.385	+0.094
Զբաղվածներ/բնակչության թվաքանակ	**-0.594**	+0.252	**+0.530**	+0.359
Գործազուրկներ/բնակչության թվաքանակ	**+0.825**	-0.145	-0.254	-0.103
Աղքատներ/բնակչության թվաքանակ	+0.251	-0.066	-0.186	**-0.878**
Ծայրահեղ աղքատներ/բնակ. թվաքանակ	+0.168	+0.086	-0.185	**-0.923**
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	+0.498	+0.328	**+0.558**	**+0.533**
Արդյունաբերություն՝ 1 շնչի հաշվով	+0.028	-0.006	**+0.944**	+0.154
Հանքագործական արդյունաբեր.՝ 1 շնչի հաշվով	-0.015	-0.302	**+0.936**	+0.135
Մշակող արդյունաբերություն՝ 1 շնչի հաշվով	+0.030	**+0.722**	+0.019	+0.016
Գյուղատնտեսություն՝ 1 շնչի հաշվով	**-0.947**	-0.179	-0.009	+0.088
Բուսաբուծություն՝ 1 շնչի հաշվով	**-0.855**	+0.273	-0.079	+0.011
Անասնաբուծություն՝ 1 շնչի հաշվով	**-0.543**	**-0.657**	+0.085	+0.137
Շինարարություն՝ 1 շնչի հաշվով	+0.294	+0.078	+0.114	**+0.852**
Մանրածախ առևտրի շրջանառ.՝ 1 շնչի հաշվով	**+0.794**	**+0.504**	-0.015	+0.174
Ծառայությունների ծավալ՝ 1 շնչի հաշվով	**+0.776**	**+0.505**	+0.163	+0.283
Միջին ամսական անվանական աշխատավարձ	+0.405	+0.124	**+0.847**	+0.291

Նարնջագույնով ընդգծված են գործոնի հետ դրական և միջին կամ բարձր կախվածություն ունեցող ցուցանիշները, իսկ կարմիրով՝ բացասական և միջին կամ բարձր կախվածություն ունեցող ցուցանիշները (երկու դեպքում էլ շեմ է ընտրվել 50%-ը):

Այժմ մեկնաբանենք ստացված ցուցանիշների բնութագրիչները:

Առաջին գործոնը բնութագրում է այն տարածաշրջանները, որոնք բնակչության ընդհանուր թվաքանակում ունեն քաղաքային բնակչության մեծ տեսակարար կշիռ, առկա է գործազրկության բարձր մակարդակ (հետևաբար՝ փոքր գյուղական բնակչություն և զբաղվածության ցածր մակարդակ), տնտեսության ճյուղերից զարգացած են առևտուրը և ծառայությունների ոլորտը, իսկ ահա գյուղատնտեսությունը վատ վիճակում է: Այս բնութագրիչներն առավելապես բնորոշ են այնպիսի տարածաշրջաններին, որոնք կազմված են խոշոր քաղաքներից, կամ հենց տարածաշրջանն ինքնին քաղաք է: Հետևաբար, այս գործոնը պայմանականորեն անվանում ենք «քաղաքային տարածքային միավորների զարգացում»:

Երկրորդ գործոնը բնութագրում է այն տարածաշրջանները, որոնցում առկա է բնակչության թվաքանակի դրական տեղաշարժ (բնական աճի բարձր մակարդակ), միևնույն ժամանակ, զարգանում են մշակող արդյունաբերությունը, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտը: Այս գործոնը պայմանականորեն կանվանենք «տնտեսական հանգույցների զարգացում»:

Երրորդ գործոնին բնորոշ է զբաղվածության, արդյունաբերության, հատկապես՝ հանքարդյունաբերության զարգացման բարձր մակարդակ, բնակիչների բարձր ֆինանսական ապահովվածություն (ինչպես ՀՆԱ-ի, այնպես էլ

միջին ամսական անվանական աշխատավարձի տեսքով): Այս գործոնն անվանել ենք «խոշոր արդյունաբերական կենտրոնների զարգացում»:

Չորրորդ գործոնը կոչել ենք «շինարարական կենտրոնների զարգացում», քանի որ այս գործոնին բնորոշ է հնարավորինս ցածր աղքատության մակարդակ՝ պայմանավորված մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և շինարարության ծավալների բարձր մակարդակով:

Արդեն իսկ ունենալով առանձին գործոնների բնութագրիչները՝ կարող ենք անցում կատարել այդ գործոնների գնահատականներին՝ ըստ ՀՀ մարզերի և մայրաքաղաք Երևանի (աղյուսակ 6):

Աղյուսակ 6

ՀՀ մարզերի և մայրաքաղաք Երևանի գործոնային գնահատականները

Մարզը	I գործոն	II գործոն	III գործոն	IV գործոն
Երևան	2.174	1.593	0.092	0.856
Արագածոտն	-1.181	-0.132	-0.427	0.941
Արարատ	-1.065	1.613	0.228	-0.497
Արմավիր	-1.074	0.467	-0.136	0.250
Գեղարքունիք	-0.777	0.006	-0.452	-0.042
Լոռի	0.522	-1.093	-0.260	-0.853
Կոտայք	0.437	0.454	-0.095	-0.578
Շիրակ	0.242	-0.037	-0.108	-2.122
Սյունիք	-0.024	-0.885	2.833	0.414
Վայոց ձոր	0.069	-0.509	-0.740	1.523
Տավուշ	0.678	-1.476	-0.936	0.109

Ինչպես ենթադրվում էր, առաջին՝ «քաղաքային տարածքային միավորների զարգացում» գործոնի գնահատականով բացարձակ առաջատարը Երևանն է, որի գործոնային գնահատականը կազմում է 2.174: Դրական, սակայն առավել ցածր գնահատական են գրանցել Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերը, իսկ ահա Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերը գրանցել են բացասական գնահատական:

«Տնտեսական հանգույցների զարգացում» գործոնը համեմատաբար բարձր գնահատական ունի Արարատի մարզում (1.613) և մայրաքաղաք Երևանում (1.593): Մտահոգիչ ցածր է Տավուշի մարզի համապատասխան գնահատականը: Իսկ ահա «խոշոր արդյունաբերական կենտրոնների զարգացում» գործոնով կանխատեսելիորեն առաջատար է Սյունիքի մարզը, մնացյալ մարզերի դեպքում գնահատականները բավականաչափ մոտ են:

Չորրորդ կամ «շինարարական կենտրոնների զարգացում» գործոնով առաջատար է Վայոց ձորի մարզը (1.523), իսկ բավականին ցածր գնահատականով աչքի է ընկնում Շիրակի մարզը (-2.122): Մյուս մարզերի գնահատականները տատանվում են [-1;1] միջակայքում:

Այնուամենայնիվ, ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունը վերոդիտարկյալ ցուցանիշների տեսանկյունից վերջնականորեն գնահատելու համար հաշվարկված գործոնային գնահատականների, ինչպես նաև այդ գործոնների ընդհանուր վարիացիան բացահայտող գործակիցների (այս դեպքում՝ կշիռ) միջոցով հաշվարկել ենք նաև ընդհա-

նուր զարգացման գնահատականը՝ կշռված վիճակագրական միջինի բանաձևը կիրառելով: Ըստ այդմ, Երևանի և 10 մարզերի զարգացման գնահատականները ներկայացվել են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Երևանի և մարզերի զարգացման համախմբված գնահատականները

Մարզը	*Զարգացման գնահատականը*
Երևան	1.476
Սյունիք	0.321
Կոտայք	0.242
Արարատ	0.017
Վայոց ձոր	-0.118
Շիրակ	-0.131
Լոռի	-0.229
Տավուշ	-0.314
Արմավիր	-0.319
Գեղարքունիք	-0.417
Արագածոտն	-0.529

Զարգացման համախմբված գնահատականները ևս մեկ անգամ փաստում են, որ Երևանը սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով ՀՀ առաջատար տարածաշրջանն է: Փոքր, սակայն մյուս մարզերի համեմատ դրական զարգացման մակարդակ ունեն նաև Սյունիքի, Կոտայքի և Արարատի մարզերը: Մյուս մարզերի դեպքում մեր հաշվարկած զարգացման համախմբված գնահատականները բացասական մեծություններ են:

Իրականացված հաշվարկները ևս մեկ անգամ փաստում և համապարփակ ձևով ներկայացնում են, որ ՀՀ-ում առկա է տարածքային անհամաչափ զարգացում, որը ակներև է Երևանի և ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշների մեծ տարբերություններով: Այնուամենայնիվ, ցուցանիշները նաև վկայում են, որ մարզային մակարդակով ՀՀ-ում առկա է տարածքային որոշակի համաչափ զարգացում, և խնդիրը սրությամբ է արտահայտվում մարզերի համեմատ Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակով:

Այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում դիտարկելու այն գործոնները, որոնք ձևավորել են ՀՀ տարածքային անհամաչափ զարգացումը կամ որոնց արդյունավետ կառավարմամբ հնարավոր է մեղմել այն: Այս խնդրում, կարծում ենք, առանձնակի կարևոր է համակարգային մոտեցումը, որը կհանգեցնի ամբողջ տնտեսության համակարգի կատարելագործմանը և օպտիմալացմանը: ՀՀ Կառավարության կողմից իրականացվող տարածքային քաղաքականությունն այդ տեսանկյունից, անկասկած, ենթակա է կատարելագործման, այլապես ՀՀ-ում առկա չէր լինի տարածքային անհամաչափ զարգացում, որն արդեն իսկ ներկայացվել է վերը:

Այս պարագայում հարց է առաջանում. կառավարման ի՞նչ գործիքակազմի կիրառմամբ հնարավոր կլինի մեղմել գնահատված անհամաչափությունը: Կարծում ենք՝ քաղաքականության բարելավման գործընթացում շեշտը պետք է դրվի ոչ միայն նեղ խնդիրների լուծման վրա (որոնց անհրաժեշտությունն անվիճելի է), այլև պետք է իրականացվի տարածքային ռազմավարական

կառավարում: Թեև Հայաստանի Հանրապետությունում ներդրված է տարածքային զարգացման ռազմավարություն, այնուամենայնիվ, տարածքային կառավարումը դեռևս ամբողջականորեն չի իրականացվում ռազմավարական կառավարման սկզբունքներին համապատասխան[8]: Առաջին հերթին, լուծման ենթակա խնդիր է հենց մարզային զարգացման ռազմավարությունների և ՀՀ տարածքային զարգացման ռազմավարության համակարգումը: Այս գործընթացը ենթադրում է հետևյալ քայլերը.[9]

- տարածքային զարգացման առկա ռազմավարությունը պետք է վերափոխվի ու հիմնվի այն ուղղակի և անուղղակի գործոնների վրա, որոնք հնարավորություն կտան մեծացնելու տարածքային տնտեսական դերակատարների դրական ազդեցությունը,
- ռազմավարությունը պետք է կենտրոնանա տարածքային միավորների առանձնահատուկ կարողությունների բացահայտման և դրանց իրագործման վրա, այլ ոչ թե համանման մոտեցում ցուցաբերվի բոլոր տարածքային միավորների նկատմամբ, և ըստ այդմ՝ բոլոր տրանսֆերտները փոխանցվեն ոչ թե պարզապես դրանց գոյության ապահովման, այլ տարածքային միավորների ներուժի բացահայտման և զարգացման համար,
- շեշտը պետք է դրվի ոչ միայն և ոչ այնքան տարածքային միավորների թերությունների վերացման, թույլ կողմերի հաղթահարման, այլ հնարավորությունների և ուժեղ կողմերի գերակայության վրա:

Խոսելով տարածքային համաչափ զարգացման համակարգային մոտեցման մասին՝ չենք կարող չանդրադառնալ ՀՀ Կառավարության տնտեսական քաղաքականության ճշգրիտ «արտապատկերման» հիմնախնդրին: Պետության կողմից իրականացվող մակրոտնտեսական քաղաքականությունը, հատկապես՝ հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից, պետք է անպայմանորեն տարբերակվի ՀՀ տարբեր մարզերի և մայրաքաղաք Երևանի համար: Այդ տարբերակումն է, որը կարող է տնտեսական, այդ թվում՝ մարդկային և կապիտալ ռեսուրսների շարժունության հաշվին կանխել ՀՀ տարածքային անհամաչափ զարգացումը: Այս համատեքստում, որպես դրական տեղաշարժ, կարող ենք ընդգծել ծրագրային բյուջետավորման համակարգի ներդնումը ՀՀ-ում, ինչը հնարավորություն կտա պետական բյուջեից իրականացվող հատկացումները գնահատել ըստ իրենց արդյունավետության, հետևաբար, հնարավորություն կստեղծվի տարածքային միավորներում իրականացված բյուջետային ծախսերը գնահատել տարածքային միավորների համաչափ զարգացման համատեքստում[10]: Սակայն այս նպատակակետին հասնելու համար նախ անհրաժեշտ է մշակել և ներդնել բյուջեի ծախսերի արդյունավետության գնահատման մոդել, ինչը ՀՀ-ում դեռևս չի իրականացվել:

Այս համատեքստում, որպես մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետ «արտապատկերման» գործիք, կարող է հանդես գալ ֆիսկալ

---

[8] Տե՛ս ՀՀ 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն, ՀՀ ՏԿԵՆ, 2016:

[9] Տե՛ս The Organisation for Economic Cooperation and Development (OECD), "Regional Development Policy", http://www.oecd.org/cfe/regional-policy/regionaldevelopment.htm:

[10] Տե՛ս Ռազմավարություն ՀՀ ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման, http://www.irtek.am/views/act.aspx?tid=126411&sc=p48:

ապակենտրոնացումը, որը ֆիսկալ որոշումների և գործիքների փոխանցումն է կենտրոնական կառավարությունից տեղական ինքնակառավարման մարմիններին: Այս քաղաքականությունը հնարավորություն է ստեղծում բարձրացնելու պետական հատվածի արդյունավետությունը և տեղական ինքնակառավարման մարմինների միջև մրցակցությունը, այն կարող է խթանել նաև տնտեսական ակտիվությունը[11]:

Այնուամենայնիվ, այս խնդրի կարևորությունը գնահատելու համար ներկայացնենք նաև որոշ ցուցանիշներ՝ կապված ՀՀ-ում իշխանությունների ապակենտրոնացման հետ: Այս նպատակով հաշվարկվում է տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռների միջինը հանրային ծախսերում և ՀՆԱ-ում: ՀՀ-ում 2018 թ. դրությամբ այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 7,6% և 1,9%՝ Եվրոպական միության 23,4% և 10,9% ցուցանիշների համեմատ[12]: Այս հանգամանքը ևս մեկ անգամ հիմնավորում է ֆիսկալ ապակենտրոնացման անհրաժեշտությունը, որովհետև այդ կերպ կմեծանա առանձին համայնքների ֆինանսական անկախությունը, որն էլ կխթանի տարածքային համաչափ զարգացման խնդիրների լուծումը:

Խոսելով տարածքային համաչափ զարգացման համատեքստում տեղական ինքնակառավարման համակարգի մասին՝ չենք կարող չանդրադառնալ համայնքների խոշորացման խնդրին: Ինքնին համայնքների խոշորացումը ենթադրում էր համայնքների ֆինանսական հնարավորությունների մեծացում, որը պետք է մեղմի անհամաչափ զարգացմամբ պայմանավորված խնդիրները: Այնուամենայնիվ, այդ գործընթացը պետք է հիմնվեր ՄԱԿ-ի այն եզրակացության վրա, որ անհրաժեշտ է գործառույթների փոխանցումը համադրել այդ գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական հնարավորությունների հետ, այլապես գործընթացը կստանա ձևական բնույթ և չի ապահովի ցանկալի արդյունք: Եվ այս պարագայում, եթե դիտարկենք նաև այն փաստը, որը Երևանի բյուջետային եկամուտներն ու ծախսերը գրեթե 2,5 անգամ գերազանցում են բոլոր համայնքների համապատասխան ցուցանիշների հանրագումարները, ապա պարզ կդառնա, որ այս տեսանկյունից խնդիրները ևս բազմազան են[13]:

Հետևաբար, անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման գործող համակարգը կատարելագործել գիտական հիմնավոր մոտեցումներով, որոնք հնարավորություն կտան ապահովել կառավարման ներդաշնակությունը: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի հասնել ցանկալի արդյունքի, մինչդեռ կամայական մոտեցումները և որոշումները հանգեցնում են համակարգի ձևախեղման:

Եզրակացություններ: Ամփոփելով ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման դիտարկումները՝ նշենք, որ հետազոտության շրջանակում իրականացվել է ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման քանակական գնահատում երկու հիմնական մոտեցումների և մեթոդների կիրառմամբ՝

---

[11] Տե՛ս **Ծ. Կարապետյան և ուրիշներ**, Համայնքային տնտեսության զարգացման և ապակենտրոնացման ազդեցությունը ՀՀ մակրոտնտեսական կայունության ապահովման վրա, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, Երևան 2019, էջ 6-7:

[12] Տե՛ս նույն տեղը, էջ 8:

[13] Տե՛ս նույն տեղը, էջ 15-27:

1. Կլաստերային վերլուծությամբ Երևանի և տասը մարզերի սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշների հիման վրա կազմվել է տարածաշրջանների զարգացման աստիճանակարգության դենդոգրամը, որոշվել է մարզերի կլաստերացման աստիճանը և ներկայացվել ու մեկնաբանվել են կլաստերացման արդյունքները:
2. Իրականացվել է նաև գործոնային վերլուծություն, որի հիման վրա առանձնացվել են 4 հիմնական գործոններ, որոնց համապատասխան մարզային գնահատականներով, ինչպես նաև այդ գործոնների միջոցով վարիացիայի բացահայտվող գործակիցներով հաշվարկվել են Երևանի և տասը մարզերի զարգացման համապարփակ գնահատականները: Ստացված արդյունքները պարզաբանվել և մեկնաբանվել են:

Սույն հետազոտության արդյունքներն ամփոփելով՝ կարող ենք ևս մեկ անգամ փաստել, որ ՀՀ-ում առկա է տարածքային անհամաչափ զարգացում, որը տարեցտարի հանգեցնում է Երևանի և տասը մարզերի սոցիալ-տնտեսական բնութագրիչների առկա անհամապատասխանության մեծացմանը: Վերջինիս կանխման համար անհրաժեշտ է անհապաղ բարելավել տարածքային կառավարման քաղաքականությունը, որը, մեր խորին համոզմամբ, պետք է հիմնվի այնպիսի գործողությունների և մոտեցումների վրա, ինչպիսիք են՝

1. մարզային զարգացման ռազմավարությունների և ՀՀ տարածքային զարգացման ռազմավարության համակարգում,
2. ՀՀ Կառավարության կողմից իրականացվող մակրոտնտեսական քաղաքականության ճշգրիտ «արտապատկերում» տարածքային միավորներում, ինչպես նաև դրա տարբերակում,
3. տեղական ինքնակառավարման գործող համակարգի կատարելագործում՝ գիտական հիմնավոր մոտեցումներով և այլն:

Օգտագործած գրականություն

1. «ՀՀ 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն», ՀՀ ՏԿԵՆ, 2016:
2. «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019», ՀՀ ՎԿ, 2019:
3. Կարապետյան Ծ. և ուրիշներ, Համայնքային տնտեսության զարգացման և ապակենտրոնացման ազդեցությունը ՀՀ մակրոտնտեսական կայունության ապահովման վրա, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, Եր., 2019:
4. Քթոյան Ա., Տարածքային անհամաչափ զարգացման քանակական «դեմքը», Եր., «Ամբերդ» տեղեկագիր, 2019/1, ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն:
5. Коваленко Е.Г., Региональная экономика и управление, Санкт-Петербург, 2005.
6. Bergman E.M., Feser E., Regional Economic Development Planning, The Routledge Handbook of International Planning Education, Chapter 17, 2019.

7. Kyrylych K., Problem of Uneven Economic Development of the World Economy: Essence and Causes, Lviv, Ukraine, "Intellectual Economics" Research Journal, Vol. 7, No 3, 2013.
8. Ray D., Uneven Growth: A framework for Research in Development Economics, Pittsburgh, USA, "Journal of Economic Perspectives", Vol. 24, Number 3, Summer 2010.
9. http://www.irtek.am/views/act.aspx?tid=126411&sc=p48
10. http://www.oecd.org/cfe/regional-policy/regionaldevelopment.htm

АМАЗАСП ГАЛСТЯН
Исследователь исследовательского центра "Амберд" АГЭУ, кандидат экономических наук

ГАГИК БАДАДЯН
Магистрант кафедры управления АГЭУ

Социально-экономические проблемы несоразмерного территориального развития Республики Армения в современных условиях.– Социально-экономические проблемы несоразмерного территориального развития Республики Армения многочисленны, и постоянно растущие объемы этого несоразмерного развития увеличивают важность решения этих проблем. Тем не менее, существующие исследования сосредоточены только на аналитических данных, и лишь немногие исследования были проведены путем наблюдения синтетических данных и с системным подходом. Чтобы заполнить этот пробел, был проведен кластерный и факторный анализ с использованием статистического пакета. В результате регионы Республики Армения и столица Ереван были классифицированы в соответствии с уровнем их социально-экономического развития, и каждому был присвоен суммарный рейтинг факторов, характеризующих уровень социально-экономического развития территориальной единицы (полученные показатели используются только в сравнительных целях). После обобщения результатов, полученных в результате количественного анализа, была предпринята попытка дать некоторые рекомендации с системным подходом, которые могут способствовать развитию территориальной политики РА.

Ключевые слова: *территориальное развитие, социально-экономические проблемы, факторный анализ, кластерный анализ, территориальная политика.*
JEL: O10, R11, R58

HAMAZASP GALSTYAN
Researcher at "AMBERD" ASUE Research Center,
PhD in Economics

GAGIK BADADYAN
MA Student at the Chair of Management at ASUE

Socio-Economic Problems of Disproportionate Territorial Development of the Republic of Armenia in the Current Conditions.– The socio-economic problems of the disproportionate territorial development of the Republic of Armenia are numerous, and the ever-increasing volumes of that disproportionate development increase the importance of the solution of those problems. However, existing researches focus only on analytical data, and few studies have been conducted through the observation of synthetic data and with the systematic approach. To fill this gap, in this research cluster and factor analyses were performed using a statistical package. As a result, the regions of the Republic of Armenia and the capital city of Yerevan were classified according to their socio-economic development level, and each was given a summary factor rating describing the socio-economic development level of the territorial unit (the obtained indicators are used only for comparative purposes). After summarizing the results obtained by the quantitative analysis, it has also been attempted to make some recommendations with a systematic approach, which may contribute to the development of RA territorial policy.

Key words: *territorial development, socio-economic problems, factor analysis, cluster analysis, territorial policy.*
JEL: O10, R11, R58